

Նը կայ, որ մեր պարտութիւնը ծուսիմում (Խօժեստվենսկու հաւատորմիդի կործանումը) ողբալի է, բայց այն ոչինչ կապ չունի մեր քաջ գորաբանակի հետ, որ գոնւում է հիանալի դրութեան մէջ և զերմ փափազում է վրէժ առնել թշնամուց և յաջողութիւն ձեռք բերել, յուսով եմ, մօտիկ ապագայում Մեր գօրքերի բռնած դիրքերը շատ գերազանց ամրացրած են: Մինչև այժմ անձրևային եղանակը խանգարում էր ինձ յարձակողական դիրք բռնել, բայց այժմ, երբ մեր Մուկդէնի մօտ ունեցած կորուստները լրացրած են, երբ մեր գօրաբանակը ուժեղացրած է Եւրոպական Ռուսիայից եկած նոր գօրքերով, ես զգում եմ, որ կարող եմ յաջողութեանմբ դիմադրել թշնամուն: Յոյս ունիմ այս ամսուայ ընթացքում (Յունիսի) յարձակումն սկսել, որով միանգամայն կը փոխուի գործի դրութիւնը: Դարձեալ կրկնում եմ. Ռուսիան կարող է լիովին հաւատալ մեր գօրքերի ուժին և զօրութեանը: Մեր գրութիւնը բնաւ այնքան տագնապալի չէ, որ անհրաժեշտ լինի կապել հաշտութեան դաշն, որի պայմանները Ռուսիայի համար անշահաւէտ կը լինին»:

Այս համարձակ որոշման տակ բացի Լինեվիչից, ստորագրել են տասնումէկ գլխաւոր ժեներալներ, որոնց թւում դարձեալ քաջամարդիկ Կուրօպատկինը:

Հիսաքքրքրականն այն է, որ եազօնական գօրապեսներն էլ դէմ են հաշտութեանը: Օեաման խնդրում է միկատին յետաձգել բանակցութիւնը մինչև նոր ճակատամարտ, որ սպասում է յունիսի ընթացքում և որ անշուշտ մի նոր յաղթութեամբ պիտի պսակի եապօնական գօրաբանակը: Բայց նշանաւոր տարբերութիւն: Օեամային ձայնակից է իւր հայրենիքի հասարակական կարծիքը, իսկ Լինեվիչի մնուի յոյսերին չի ծափահարում Ռուսիայում և ոչ ոք, բացի Սովորինից և Գրիգորունտից. չի ծափահարում նոյն իսկ բիւրօկրատիան: Այսպէս, Մայիսի 25-ին Պետերբուրգում կայացած արտաքոյ կարգի խորհրդում մասնակցող բարձրաստիճանն պաշտօնեաներից եւ ոչ մէկը յօգուտ պատերազմի շարունակութեան ձայն չի տուել:

Հաշտութիւնը Ռուսիայի համար այնքան է անհրաժեշտ, որքան մաքուր օդը թոքախտաւորի համար:

Ամսից աւելի է անցել, Նախիջևանի գաւառում արիւնակութիւնը չի դադարում: Թիֆլիս հասած տեղեկութիւններից երեսում է, որ դէպքերը քանի գնում այնքան մոայլ կերպարանց

են ստանում: Նախիջևան քաղաքում դրութիւնը համեմատաբար խաղաղ է: Բայց այդ ի՞նչ խաղաղութիւն է: 183 հայ խանութիւնից աւերռումից և կողոպուտից ազատուել է միայն Յ: Հայ սպանուածների թիւը հասնում է մինչև 50-ի: Յայտնի չէ որքան թուրքեր են սպանուել և սպանուել են արգեօք: Գիւղերում իրերի վիճակը աւելի սոսկալի է: Ականատեսները վերին աստիճանի յուսահատական գոյներով են նկարագրում գիւղացիների կացութիւնը: Աւերռուած գիւղերի թիւը հասնում է 50-ի, որոնցից երկու երրորդականը հայկական է: Թէ քաղաքից և թէ գիւղերից գաղթում են երեսն, Թիֆլիս և դէպի Ռուսիա: Հրդեհը անցել է Շարուրի և Դարալազաօղի գաւառը: Շարուրում հայերը մի քանի տեղ ջարդ են տուել թուրքերին և բաւական թուով սպանել: Դարալազեազում Մարտիրոս գիւղի մօտ թուրքերից ուզանուել են 300 հոգի: Սակայն գաւառի բոլոր գլխաւոր ճանապարհները բռնուած են թուրքերով: Գաւառին սպանում է սով: Սով է սպանում ամբողջ երեսնեան նահանգին, որովհետև գիւղացիները չեն վստահանում դաշտերը դուրս գալ, մինչդեռ հունձի ժանանակն արդէն սկսուել է:

Վերջին ժամանակ ոռուս զօրքերը սկսել են աւելի գործնական միջոցների դիմել խուժանի գաղանութիւնները զսպելու համար: Պարզ ասած, նրանց այժմ հրամայուած է կոտորել խովարաններին: Լրագրների ասելով Ուշիանորաշէն գիւղի վրայ եղած յարձական ժամանակ թուրքերից սպանուած են մօտ 50 հոգի, իսկ Խանլուխլար գիւղի՝ աւերման միջոցին աւելի քան 200 հոգի: Հարկաւ, զօրքերին օգնում են հայ երիտասարդները: Դաժանութիւնը քաջութեան նշան չէ, և այստեղ, ուր թուրքերը տեսնում են լուրջ դիմադրութիւն, յետ են նահանջում: և անկարգ ցրւում: Հայերը զէնք չունեն —ահա նրանց դժբախտութիւնը: Խոկ թուրքերը միշտ ունեցել են զէնք, ունին և կունենան: Հայի համար մի մօդային փողկապ աւելի գին ունի քան մի հրացան: Թուրքին հաց ու ջրից զրկիր, միայն զէնք տուր: Հայի խաղաղասիրութիւնը հասնում է խեղճութեան: Նախիջևանցիք ամենախեղն հայերն են, որոնք զէնքից մինչև այժմ վախեցել են ինչպէս ժանտախտից: Նախիջևանում գտել են դաշոյնով սպանուած հայեր, որոնք գրավաններում ուելոյլվերներ են ունեցել և չեն գործածել:

Մենք մի անգամ ասել ենք և դարձեալ կրկնում ենք— զէնքից վախենալը կուլառուրային նշան չէ: այլ մի սոսկալի ախտ: Ով չը գիտէ իրան պաշտպանել, իրաւունք չունի կուլ-

տուրական համարուելու: Հայը դարերից իվեր արշինը գերադասել է դաշոյնից և կարծել է թէ բրիստոնութիւնը պահանջում է ոչխարային հեղութիւն և խեղճութիւն: Հայը եռանդուն է փող վաստակելում և խնայողութեան մէջ: Թուրքը վերջին կոպէկը չի խնայում զէնքի համար: Հայը կարծում է, թէ զէնքը մեռած կապիտալ է: աւելի լաւ է, նրան տուած փողով խանութի ապրանքը աւելացնել և մի քիչ էլ խարել մուշտարիներին:

Թէ թուրքը դեռ անտաշ է մնացել հարիւր տարի ոռուսաց խաղաղ բաղաքականութեան հովանաւորութիւնը վայելիուց յետոյ էլ և, երեխ դեռ շատ երկար ժամանակ կը մնայ, այս, աւելի քան երբեք, ապացուցուեց նախիջնանի գէպքերով: Լրագրների թղթակիցները այնպիսի մանրամասնութիւններ են հաղորդում կոտորածից, որ մարդ ապշում է և հարցնում իրան, արդեօք, պրանի իսկապէս մարդիկ են, թէ միայն ընուաթեան կծու ծաղրով են մարդկային կերպարանք ստացել: Զահուկ գիւղում Մկրտիչ Յովհաննիսիսանին այրել են իւր կնոջ առջև: Հայ գիւղում մի ծնողի մորթել են դեռահաս զաւակների աշքերի առջև և այրել են մի քանի երեխաներ: Թուրքը չի զգացում ոչ կանանց յուսահատ աղաղակներից, ոչ երեխաների աղիողորմ ճշերից: Նա ծծկերին խլում է մօր կրծքից և ցցում սուրի ծայրի վրայ, ծերին և անդամալոյծին գնդակահար անում, կանանց արգանդը պատում է դաշոյնի ծայրով և անծինին դուրս ձգում: Նախիջնանում սպանում են մի մանկան հօրն ու եղբօրը: Մանուկը բաղարում ըռնում է նախիջնանի խանի փէշերը և հեծկլտանքով փրկութիւն աղերսում, մի թուրք խփում է և մանկանը սպանում: Այս արդէն գազանութիւն էլ չէ: Այս մի տեսակ այլասեռումն է: Միայն ընութիւնից պատժուած մի ցեղ կարող է այդչափ հրէշանալ: Միայն վախկոտ, ստոր և բսու փորսողները կարող են այս տեսակ սպանութիւններ գործել:

Այլև կասկածելի չէ, որ թուրքերի ներկայ շարժումը Անդրկովկասում համիսլամութեան գաղափարի առաջին ծաղիկն է: Բոլոր ոչ մահմեղական ականատեսները միաբերան վկայում են, որ թուրք խուժանը նախիջնանում և գիւղերում յարձակումների ժամանակ ունեցել է կրօնական դրօշակ և Ալիի ձեռքը: Շատերը յարձակուղներից հագած են եղել սպիտակ շապիկ կարմիր թևերով և գլուխներին ունեցել են տաճկական կարմիր ֆէսեր: Կարմիր ֆէսը համիսլամական գաղափարի էսքիչներից մէկն է: